

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՔԱՐՈԶԸ 1)

ՍԼՐԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ.

Մարիկ արեք էս օր Զեղ մի քարոզ խօսիմ. դուք էնպէս կարծում էք, որ քարոզ միայն վարդապետներ կուտան, որպէս թէ Քրիստոսի Աւտուրան, Աստուածաշուչ գիրք, մեր նախնի սուրբ Հարդապետաց խրաներ և ճառեր միայն վեղարաւոր վարդապետներուն առանձին շնորհւած է, նոքա միայն արտօնութիւն և պաշտօն ունին եկեղեցւու ընմէն քարոզ խօսել:

Ոչ էդպէս չէ. քահանան նոյնչափ իրաւունք ունի ամէն ժամանակ քարոզ խօսել, խրատ տալ իւր գիւղական ու ծխական ժողովուրդին, ամէն տօնի և կիրակի օրերում. քանի որ մեր գիւղական ժողովուրդ անպէս կը լինի, որ տարիներով վարդապետի երես չեն տեսնար: Վարդապետներ երբեմն ամպի պէս կուգան ու կանցնեն, մի կաթիլ անձրե չեն թափեր մեր ցամքած երկրին վրաւ Հապա ովկ պիտի խօսի Զեղ Աստուծու բան ու պատէճեր, Քրիստոսի Աւտուրան, Առաքելոց և մարգարէլից ընթերցւածներ, որ միշտ կը կարդացվէն եկեղեցւու մէջ և դուք միայն լսում էք և ոչինչ չէք հասկանում:

Շիտակ խոստովանելով կամաշեմ խօսելու, մեք քահանաներս էլ մեր կարդացած բան չենք հասկանում, որովհետև դպրոցի երես երբէք տեսած չեմք: Սորա համար Աստուծու բան ջրի ձանի պէս կը լսեի մեր ականջին. մեք եկեղեցւու ակնէն բլիսած ան կենդանի ջուրէն կարող չեմք խմել ու զովանալ: Ո՞հ անպէս պասքած ու ծարաւած դուրս կենեմք եկեղեցիէն, մեք և դուք, թէ քահանան, թէ ժողովուրդ՝ առհասարակ մի անապատ դարձած ենք, ուր երբէք ջուր չի կամ կամ այնպիսի պինդ ու կորդ անմշակ մի երկիր եղեր է մեր սիրու, զոր թէ վարել ուզեմք՝ մեր գութանի խոփ չի բանիր, ոչ միայն մեր, աւլ և նոյն խոկ վարդապետի գաւազանի խոփն ևս դժւարաւ կը վարէ:

Գիտէք դուք, ժողովուրդ, մեր քահանակից գութանի խոփ արդէն անպիտան և գուլ է, որովհնատն ոչ դպրոցի հնոցի մէջ մտած են և ոչ էլ

1) «Արարատ», 1894, մարտի տեսար»

Կրթութեան կռանով ծեծւած ու միւսած են, մեք էնպէս խամ երկաթ մնացած ենք, մեր խոփ պողպատով զօդւած չէ, Հապա Բնչպէս կարող եմք ժողովուրդի կորուցած ու խառացած երկիր վարել.

Այժմ արացէք զուք, ժողովուրդ, այս գատաստան ձեզ կը թողում, քանցանքն ում է, երբ գիւղական քահանաներ տղէտ և անիմաստ են, քանցանք եպիսկոպոսն է, որ կը ձեռնադրէ, թէ Եջմիածնաւ բարձր Հոգեոր Ատենինն է, որ կը թողատրէ: Զէ ժողովուրդին է, որ կը թախանձէ, կը պահանջէ, համախօսական ժողովներ կը կազմէ, հարիւրաւոր ստորա գրութիւններ թափում են խսդրազրին վրաց, վաւերական կնքով էլ դրոշ մնլով խմբովին դիմում են Եջմիածնաւ դուռը, ալսպէս խօսում են.

Ե՛ Հաւրիկ, հոգուդ մեռնինք, եկեր ենք քահանաւ կուզենք, ահա բերեր ենք մեր գիւղի տիրացուն, որ քահանավի զաւակ է, մեր գիւղի մէջ ծնած է, մեք իւր մանկութենէն գիտենք սորա վարքն ու բարք պարկեցած է, հոգ ու խոնարծ է, վաղուց ի վեր եկեղեցւոն կը ծառալէ, դպրութիւն կանէ, պատարագիչ քահանավին սպասաւորում է և ալն, մեզ շատ ու բաւական է:

Հաւրիկ գիտնալով որ ամեն օր քահանավի ձեռնադրութեան խնդիր կաէ, մի ձեռնադրութեան Մաշոսց մօտ պատրաստ է, խկոն մի Աւետարանի գլուխ բանալով տիրացուին ձեռք կուտաչ, զու տեսնաս էն ժամանակ մեր տիրացուին կերպարանք, վախեն ասեմ թէ ամօթէն, երեսներ կոկան կարմրել, բաց Հաւրիկ իւր ներողամիտ բնաւորութեամբ կը քաշալերէ, տիրացուն կոկսի համը ու կակագելով Աւետարանին մի քանի տռողեր կարդալ:

Հաւրիկ տեսնելով տիրացուին խեղճութիւնը, կը դառնաւ զէպի ներկալացուցիչ ժողովուրդ, ուր ես էլ պատահմամբ ներկաւ գտնւեցաւ, տեսէք Բնէ ասաց Հաւրիկ ժողովուրդին: «Դուք այս տիրացուն բերած էք և կուզէք ձեր գիւղին համար քահանաւ ձեռնադրել տամ, բաց ահա տեսաք զուք, որ ձեր տիրացուն Աւետարան կարող չէ կարդալ: Հապա եթէ եկեղեցւու խորհուրդներ հարցնեմ կամ փորձեմ թէ կարդացած Աւետարանի մտքեր կը համինաւ, ինչ պիտի անէք: Դուք չդիտէք միթէ որ Սինօդի բարձր Ատենը մի վճիռ արձանագրելով հրատարակած է, որ աւտոհետեւ անուսումն, անդպրոց, տգէտներ քահանաւ չենադրւեն»:

Դուք այժմ մատիկ արէք, ժողովուրդ, Հաւրիկին խօսքեր և գիւղական ժողովուրդին արդար փաստաբանութիւն:

Հաւրիկն սկսեց մի երկար ճառ խօսել իւր ընտանի և բնական ոճով թէ քահանավի կոչումն Բնչ բարձր նշանակութիւն ունի և թէ նորա պաշտօնին պարտականութիւն քանի մեծ է, թէ նորա մտքի ճրագ պէտք է լուս ունենաւ որ ձեզ լուս տաէ: Դուք չդիտէք որ քահանաւ գիւղական ժողովուրդի աղն է, ձեզ համ պիտի տաէ: Եթէ քահանաւ էլ ժողովուրդին պէս

իւր տղիտութեամբ և վարքով անհամ լինի, ինչ կը լինի. ժողովուրդին հետ միասին անհամ և անպէտք դառնալով ազ ևս քրիստոնէութեան համ հոտ չի մնար իւր մէջ, միան սոսկ անունով քրիստոնեակ կը լինի, իսկ դործքով բոլորովին հեռացած քրիստոնէութեան ճանապարհէն,

Դուք չգիտէք, որ քահանակն ձեր հոգեոր հովիւն է, որ պէտք է արթուն լինի մոտքի աչքով և գիշեր յերեկ հոկէ ձեր վրաէ ինչպէս պահապան հրեշտակ, որպէս զի դուք չմոլորիք քրիստոնէութեան ուղիղ ճահապարհէն: Կը հարցնեմ ձեզ, դուք ձեր անբան ոչխարներ լիմար և ապուշ հովին կը չանձնէք. չի որ ամեն կերպով կաշխատիք սրատես, ճարտար և փորձառու հովիւն ձեռք բերել, որ ձեր ոչխարներ լաւ գիտնակ արածել արթուն աչքով գալէրէն պահպանել, երբեմն ևս հիւանդ ոչխարներուն զեղութ ու զարման անել: Դուք երբ ալսչափ հոգածութիւն կանէք ձեր ոչգեղ ու զարման անել: Ենչու համար ոչխնչ փութ չունիք ձեր հոգեոր հովիւներուն խարներուն, ինչու համար բաւական է որ քահանափի զաւակ լինի, հոգ չէ թէ ընտրութեան համար. բաւական է որ քահանափի զաւակ լինի, հոգ չէ թէ բարի անուն և բարի վարք չունի և ազն: Դուք էնպէս կարծում էք, որ քահանապութիւն մի ժառանգութիւն է և վախճանած քահանափի որդին: Իրաւունք ունի ժառանգել անպատճառ իւր հօր երիցութեան պաշտօն, իրաւունք ունի ժառանգել անպատճառ իւր հօր երիցութեան պաշտօն, թողունք ալս. լուժ զարմանալի է, որ շատ ձերացած քահանաներ, ամեն ջանք ի դործ դնում են, որ իրենց կենդանութեան ժամանակ ձեռնազրել տան իրանց որդիք թէ արժանաւոր լինին թէ անարժան:

Աերջապէս ձեր բերած տիրացուն շատ տպէտ է. քահանակ լինելու ուսումն չունի, լաւ է որ առանց քահանափի մնաք, քան թէ տպէտ քահանակ ունենաք. տարէք, փոխեցէք մի ուրիշ արժանաւոր ուսեալ տիրացու բերէք. ես իսկոյն ձեռնազրել կուտամ:

Այժմ դուք մտիկ արէք, տեսէք մեր զիւղացի ժողովուրդ ինչ պատասխան կուտան Հալլիկին:

Ե՛ Հալլիկ ջան, ինչ զիւրութեամբ խօսում ես, միթէ չգիտես մեր խեղճ զիւղացի ժողովուրդին հալ. մեք տարիներով սպասելով հազար ձորով ձեռք բերած ենք այս տիրացուն, որ զիւղի ծխական դպրոցէն ելած ծաղիկն է, և քիչ, շատ ժամակարգութեան մէջ վարժ: Միշտ մեր քահանափին օգնական եղել է, առանց ուրարի սարկաւագութիւն կանէ, քահանաներ կը խօսի, բուրլառ կանէ, շարականներ և տաղեր կերպէ, ձան շատ անուշ ու քաղցր է. ալսչափէն աւելի էլ ինչ պիտի, մեզ համար շնտ ու բաւական է:

Մի բան էլ, Հալլիկ, այս տիրացուն զիւղին մէջ ծնած ու մեծացած լինելով իրեն վարքն ու բարք մեզի չափանի է. ինքն պարկեցտ, համեստ ու հեղ մարդ է և մի քանի զաւակներու հալլը. մի լաւութիւն էլ այս է, որ մեզ համար շատ շահաւոր է, երբ քահանան ընիկ մեր զիւղացի լինի, նա հողարածին կոճենակ զիւղին մէջ. մեք ալլ ևս չենք պարտաւորիր

նոր բաժին տալ, Մի սան էլ, Հայրիկ, ներողութիւն տուր խոստովաճառքը խօսիմք.

Մեք աղքատ չքաւոր գիւղացի եմք, շատ անգամ պատահում է, որ մեր քահանակի իրաւունքը շուտ չենք վճարեր. իսեղձ քահանակն մկրտութիւն արեր է, պասկ է զրեր, մեռել է թաղեր, ամիսներով կերկարաձգեմք. կան մեր մէջ ծովխեր, Աստւած իրանց խղճմտանք տաչ, որ քահանակի հախ բոլորովին կուտեն,

Ե՛ Հայրիկ, հիմի դու գատաստան արա, եթէ մեր քահանան մեր բնիկ գիւղացի չինի և մեք երթամք չըջեմք և մեծ դժւարութեամբ գըտնեմք շատ արժանաւոր անձն, որ կանոնաւոր զպրանոցէ եւած բարձր ուսումն ունի, աղաչենք ու պաղատենք թէ արի մեր գիւղին քահանակ եղիր, Տես Բնչ կը պատասխանէ: Ես եթէ քահանակ լինիմ, կերթամ քաղաքացոց քահանակ կը լինիմ, որ ուսումն և կրթութիւն ունին և իմ պատիւս ճանաչում են, թէ ինքն գիւղացի է, տրեխ ոտք գնացեր մտել է դպրոց, բան է սորվիր, փիլիսոփակ դարձել, իւր միտք բարձրացեր, վերացեր մինչև ամպեր հասել է, ել Բրբ կը խոնարի, կը դիջանի գիւղական ժողովրդին քահանակ դառնալ:

Ահա սորա համար է, Հայրիկ, որ մեք մեր տգէտ տիրացուով գոհ պէտք է լինիմք, քանի որ ուսեալ, արժանաւոր անձը մեզ համար շատ հազարդիւս և թանգ է: Ակսէս մեք խեղճ գիւղացիքս ամեն կողմէ անբաղդ եմք, մեր ճակատագիրն ուցցէ ալսպէս է, մեք տգէտ, մեր քահանան էլ պէտք է մեզ նման տգէտ լինի: Եթէ թողլ տաս, Հայրիկ, գիւղացի կոպիտ խելքով մի փիլիսոփակացութիւն անենք: Մեղ էնպէս կը թւի, որ տգէտ ժողովրդին շատ ուսեալ քահանակ չի կպիր և բնական կերպով չեն չարմարիր իրարուս նրբ ժողովուրդ տգէտ է, Բնչպէս կարելի է, որ արժանաւոր և ուսեալ քահանակին պատիւն ու լարդ ճաճչնակ:

Ահա զորա համար է, ասաց Հայրիկ, ես կուզեմ, որ դուք սուրբ Գրոց հմուտ և լուսատու քահանակ ունենաք, որպէս զի իրեն ճրագ լուս տակ ձեզ և ձեր խաւարին տգիտութիւն փարատէ: Դուք միթէ չէք լսեր և չէք հասկնար Աւետարանին ան պարզ խօսք, որ ասում է. «Ոչ կարէ կուր կուրին առաջնորդել և ալին», Դուք ձեր բերնով կը խոստավանիք թէ մեք տգիտութեամբ կուր եմք, կը հաւանիք որ ձեր հովիւ, ձեր առաջնորդն էլ ձեզ նման անպէտ և կուր լինի. սորա վախճան գիտէք ուր կերթակ—թէ առաջնորդող քահանան և թէ ժողովուրդ ի միասին խորիսորատին մէջ կինամ:

Հայրիկ, Դու էլ անչափ տգէտ մի կարծեր զմեզ, որ մեք ձեր ասած այդ բարի և օգտակար խրատներ կարող չեմք հասկնալ, շատ լաւ կըմբռնեմք, վասն զի գիւղացիքս առջի ժամանակներու պէս անչափ տգէտ պարզամիտ չենք, որչափ կը կարծւենք. լաւն ու վատ, չարն ու բարին գիտենք որոշել:

Բալց ինչ անեմք, վարանած ու շւարած ենք, Դու էլ դիտես, Հայրիկ, որ ուսեալ և արժանաւոր ընծալացու չունիմք, չունիմք, չունիմք. առաջ ժամանակ չեն ու պայծառ վանքեր մի-մի կրթարան լինելով մեղ համար ընտիր-ընտիր քարոզիչ վարդապետներ և արժանաւոր քահանաներ պատրաստում էին, այժմ այդ վանքերու շատեր աւերակ դարձան, ափսոս մի քանի վանքեր հազիւ մնացած են, որոց մէջ մի մի խեղճ վարդապետ տրւած են իրեն պահապան։

Հայրիկ, մեք զարմանում ենք, երբ Դուք դպրոցական և արժանաւոր տիրացու պահանջում էք մեղմէ. միթէ այդ պարտքն մերն է, կամ թէ ժողովուրդ պարտական է սուրբ եկեղեցւու սպասաւորութեան պէտք լիցնել, չե՞ս որ այդ պարտաք բոլոր վիճակաւոր առաջնորդաց պատկանում է, որոց ջանք պիտի լինի միշտ եկեղեցւու հոգեոր պէտքեր հոգալ և նոկ ամենամեծ պարտիք Մալր Աթուին է, որուն ձեռք պատրաստել, նոկ ամենամեծ պարտիք Տեսչութիւն, կարող է ամեն բան անօրինել և կարգադրել, մեր վանքերու մէջ ընծալարաններ շինել տալ և մեղ համար գահը լին պատրաստել։

Տեսնում էք, Հայրիկ, ոէզադէզ պարտքերը կուպան վերջապէս կը դիզ ևին ձեր վրաչ, գիտէք որ գիւղական աղքատիկ ժողովուրդ իւր կեանքի և հացի համար միան կարող է հոգալ, եթէ մեք առանց հովի մնամք, Աստուծու առաջ պատասխանաւուն մեծ Հովիւն է, Ահա մեր տփէտ ափրացուն կառնեմք կերթամք, թող փակ մնայ մեր եկեղեցւու դուռը, երեխաներ մնան առանց մկրտութեան, մեռելներ առանց թաղման, ժողովուրդն էլ առանց ժամու և պատարագի, մեր մարմնական կեանքն արդէն անմմիթար ու դառն է, միան հոգեոր կեանք, եկեղեցին, քահանան, Աւետարան, քրիստոնէական հաւատք և երկնից արքայութիւն մեր միթարութիւնն է, եթէ բարձւի մեղմէ և մեք խպառ զրկւինք հոգեկան միթարութենէն, այլ ևս մեղ ինչ կը մնայ—ապրել Հայաստանեալց եկեղեցւու մէջ միան սոսկ անունով քրիստոնեալուն։

Ներկայացող ժողովուրդին աւ վերջի լուսահատ և սրտառուչ խօսքերը լսեց Հայրիկ ու լռեց, Նո տեսաւ որ նորա չիրտ խոր զգացումով լիցւեցաւ, վասն զի խոր տպաւորութիւն թողեց նորա հոգւոն վերակ և ձգեց զինք մտահոգ թափնութեան մէջ։

Ահա ինչ որ տեսաւ և լսեցի Եջմիածնաւ Վեհարանին մէջ, պատմեցի ձևով ժողովուրդ, այդ քահանաւ խնդրող գիւղացիք իւրանց շատախօս փաստերով անսնողադիր և արդար են, Գիտէք, ժողովուրդ, աշխարհիս ամեն դասակարգի մարդիկ թէ հոգեորականք և թէ աշխարհականք, իւրաքանչիւրն իւր աստիճանին և պաշտօնին համեմատ պարտքեր ունի կատարելու, բայց ոմանք շատ անդամ թողով իւրանց պարտք՝ միշտ պահնջում են, որ ուրիշներ իրենց պարտք կատարեն։

Լսեցիք որ զիւղացի ժողովուրդ պահանջում էր հոգեոր Տեսուչէն, որ իւր պարտք տեսչութենէն կատարէ, կամ ձեռնազրել տակ իւր ներկայացուցած տիրացուն և կամ երբ քննելով չի հաւճիր, կատէ տգէտ է, ուսումն չունի, անարժան է և ալն, թող ինքն ուսեալ և արժանաւոր ընծալացուն պատրաստէ մեղ համար Ալն, ժողովուրդին այս պահանջն արդար է. բայց միթէ հոգեոր Տեսութիւն ևս նոյն ժողովուրդին պահանջներ չունի կամ դուք ինքնին զբալով չք մտածում, որ դուք էլ ձեր չափով ու վիճակով ձեր բաժին պարտքեր ունիք կատարելու Եթէ ասէք մեք տգէտ անգիր, անուսումն շինական ենք, ոչ խորհել զիսենք և ոչ զգալ. մեք մեր վարուցանով զբաղեած դառն աշխատութեան մէջ, մարմնով և հոգւով ընկճաւած՝ դաշտի մշտիներ եմք և ալն:

Ահա Արշէն Երէց անդադար խօսելով, քարոզելով պիտի զգացնէ ձեզ, թէ Բնչ է ձեր պարտիք և երբ զիւղական ժողովուրդ լսելով իմանալ և զգաէ իւր պարտուց նշանակութիւնը, այլ ևս չի կարող չքմեղս լինել թէ անգէտ եմ, ուսման համն ու ճաշակ չեմ առեր, չիսեմ,

Սիրելի ժողովուրդ, ես զրելով և քարոզելով քո ճաշակ պիտի բանամ. Աւմմ ալսքանս բաւական է, դարուն եկած է, երգում է ճախրակ մանիկ, լըծէ լըծէն. երթանք՝ ես դէպ ի զպրոց իմ դաս, դուք դէպ ի զաշտ ձեր գութան,

Ուժ և լաջողութիւն մազթում է ձեզ՝